# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի և Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի միասնական խորհրդի նիստի

(Արտահերթ հեռավար նիստը կայացել է 2026 թվականի մարտի 17–ին):

Նիստին մասնակցում են խորհրդի 9-ը անդամներից 8-ը,բացակա՝1:

Նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը:

Օրակարգում՝

1. Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխության քննարկում: /Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

**Լսեցին՝ 1**

(Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխության մասին, զեկուցող Ա. Սարգսյան):

Զեկուցողը խորհրդի անդամներին ներկայացրերց Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2026 թվականի նախահաշիվը,նշեց որ, կրթաթոշակ ստացող աշակերտների քանակի փոփոխությամբ պայմանավորված, պետք է ֆիզմաթ դպրոցի նախահաշիվը փոփոխվի, որը տեղադրվել էր խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 6-րդ ենթակետի և կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Հավանության արժանացնել տնօրեն Ա. Սարգսյանի կողմից ներկայացված Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության փոփոխված նախահաշիվը:

*Խորհրդի նախագահ՝* *Ս.Ենոքյան*